

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՐԱԶՅԱ ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՍԻԼՎԱ ԱԼԲԵՐՏԻ

**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ
ԱՆՑՈՂԱԿԱՆ ԲԱՅԵՐԻ ԱՐԺՈՒՅԹԸ**

Ժ.02.01 «Հայոց լեզու» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2021

Ատենախոսության թեման հաստատվել է Վանաձորի
Հ. Թումանյանի անվան պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր
Գուրգեն Կիպրոնի Խաչատրյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր
Աննա Հենրիկի Աբաջյան

բանասիրական գիտությունների
թեկնածու, դոցենտ
Գայանե Մելիսի Մխիթարյան

Առաջատար կազմակերպություն՝ Խ. Աբովյանի անվան հայկական
պետական մանկավարժական համալսարան

Պաշտպանությունը կկայանա 2021 թ. սեպտեմբերի 27-ին՝ ժամը 15:00-ին,
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող ԲՈԿ-ի՝
Լեզվաբանության 019 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ 0015 Երևան, Գրիգոր Լուսավորչի 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան
լեզվի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2021 թ. հուլիսի 15-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Ն. Մ. Սիմոնյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Ժամանակակից լեզվաբանության կարևորագույն խնդիրներից է բառերի կապակցելիության ուսումնասիրությունը, որն անհրաժեշտ է ինչպես բառի ճիշտ կիրառման, խոսքի ճիշտ կառուցման, այնպես էլ խոսքի ուսուցման տեսանկյուններից:

20-րդ դարի կեսերից սկսած՝ արժույթի գաղափարն ուրույն տեղ է զբաղեցնում բառերի միջև գոյություն ունեցող շարահյուսական կապի տեսության մեջ: Բայից բացի՝ ժամանակակից հայերենում արժույթակիր միավորի դերով կարող են հանդես գալ նաև բայանուն գոյականը, ածականը, մակբայը, կապը, ինչպես նաև բայական հիմքերով որոշ ձայնարկություններ: Այնուամենայնիվ, բայն է, որ առանձնանում է արժույթային կաղապարների արտահայտության և բովանդակության պլանների բազմազանությամբ, որն արժանի է ուսումնասիրության:

Հայերենում բայը, լինելով խոսքակազմիչ գլխավոր միավոր, աչքի է ընկնում կապակցելիության տարատեսակ դրսևորումներով: Սույն աշխատանքի արդիականությունը պայմանավորված է ժամանակակից արևելահայերենի անցողական բայերի կապակցական հնարավորությունների ոչ լիարժեք ուսումնասիրվածությամբ:

Անցողական բայերի կապակցական հնարավորությունների բացահայտումը կատարվում է ոչ միայն կապակցվող միավորների քերականական առանձնահատկությունների վերլուծությամբ, այլև միջգիտակարգային մի շարք իրողությունների քննությամբ, որոնցից հատկապես կարևոր է բայերի իմաստաբանական և բառակազմական վերլուծությունը: Բայերի կապակցելիության իմաստային քննությունը կոչվում է դասանշային դասակարգում¹, որը մեր աշխատանքում քննված է ըստ ենթակայի և ստորոգյալի իմաստային առնչությունների: Սույն աշխատանքում անդրադարձել ենք նաև դիմավոր բայ և խնդիր իմաստային առնչություններին, որոնք հետաքրքրական ու փոփոխական են հատկապես պատճառական բայերի առումով:

Բայի արժույթը առնչվում է նաև բառակազմությանը: Քանի որ նախկինում կատարվել է հիմնականում պարզ հիմքով բայերի արժույթի քննություն², գերազանցապես շեշտը դրել ենք կազմությամբ բարդ, ածանցավոր, արմատական ձևույթներով բայերի վրա՝ կատարելով նրանց ձևային և բովանդակային քննություն:

Ատենախոսության նպատակն ու խնդիրները: Հետազոտության հիմնական նպատակն է գիտականորեն արժևորել արևելահայերենի անցողական բայերի կապակցելիությունը՝ հիմնվելով լեզվի երեք մակարդակների (բառային, ձևաբանական և շարահյուսական) փոխկապակցվածության վրա: Այս նպատակով են պայմանավորված աշխատանքում առաջադրվող հետևյալ խնդիրները.

- ա) դասակարգել անցողական բայերը՝ ըստ արժույթային առանձնահատկությունների,
- բ) վերլուծել բաղադրյալ հիմքով անցողական բայերի բառակազմական կաղապարները՝ ըստ նրանց ներշարահյուսական հատկանիշների,
- գ) կատարել անցողական բայերի դասանշային դասակարգում,
- դ) վեր հանել բոլոր այն հնարավոր լեզվական գործոնները, որոնք կարող են ազդել բայի արժույթի ձևավորման և հնարավոր փոփոխության վրա:

Հետազոտության գիտական նորույթը: Սույն աշխատանքը ժամանակակից հայերենի

¹ Տե՛ս Գ. Զահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, էջ 461-466:

² Տե՛ս Գ. Զահուկյան, նշվ. աշխ.: Հ. Հարությունյան, Կառավարումը ժամանակակից հայերենում, Երևան, 1983:

անցողական բայերի արժույթը համակարգորեն բնութագրելու փորձ է: Հենվելով հայ լեզվաբանության մեջ կատարված ուսումնասիրությունների վրա, հաշվի առնելով բայերի կապակցելիության բազմազանությունը և հարցի ոչ լիարժեք մշակվածությունը՝ որոշել ենք անդրադառնալ անցողական բայերի կապակցելիությանը իմաստաբանական և քերականական մակարդակներում՝ նոր դիտակետից:

ա) Փորձել ենք նոր տեսանկյունից ներկայացնել բայի ենթակառուցությունը, ստորոգառությունը, կոչականառությունը:

բ) Ուսումնասիրել ենք անցողական բայերի պարագառական արժույթը:

գ) Քննել ենք կազմությամբ բաղադրյալ բայերի արժույթը՝ ըստ բաղադրիչների ներշարահյուսական հատկանիշների:

դ) Դասակարգել ենք անցողական բայերը՝ ըստ ենթակայի և խնդիրների դասային խմբերի (դասանշային դասակարգում):

ե) Ուսումնասիրել ենք լեզվական այն միջոցները, որոնք առաջ են բերում բայի արժույթի հնարավոր փոփոխություններ:

Հետազոտության ընդհանուր մեթոդաբանությունը: Հետազոտության համար մեթոդաբանական հիմք են գիտական ուսումնասիրության ինչպես ընդհանուր, այնպես էլ մասնավոր մեթոդները: Հիմնականում կիրառել ենք դասակարգման և զուգահրահամեմատական մեթոդները՝ նկարագրական, վերլուծական, համադրական մեթոդների զուգակցմամբ: Օգտվել ենք լեզվաբանական և՛ տեսական-հետազոտական, և՛ գործնական-հետազոտական, և՛ արդյունքների ներկայացման նեղ մեթոդներից:

Հետազոտության տեսական նշանակությունը: Նյութի քննությամբ ու վերլուծությամբ բացահայտված գիտական նոր տվյալներն ու օրինաչափությունները նպաստում են շարահյուսական բազմաթիվ հարցերի հարստացմանը: Խնդրո առարկա հարցի համապատասխան լուծումները բացահայտում են արևելահայերենի բայերի կապակցելիությունը՝ ըստ արժույթի և դասանշության:

Հետազոտության գործնական նշանակությունը: Ատենախոսության շրջանակներում ձեռք բերված տեսական և գործնական եզրահանգումները կարող են օգտագործվել բայի արժույթի բառարանի ստեղծման համար: Բացի դրանից՝ ատենախոսության արդյունքները կարող են օգտագործվել տեսական և գործնական քերականության դասընթացներում ու ուսուցման գործընթացում, ինչպես նաև ուսումնական ձեռնարկներ, ուղեցույցներ ու դասագրքեր կազմելիս:

Ատենախոսության փաստական նյութը: Ժամանակակից արևելահայերենի անցողական բայերի արժույթը ուսումնասիրելու համար որպես սկզբնաղբյուր վերցրել ենք «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանը»³, առանձնացրել կազմությամբ համադրական ներգործական և պատճառական բայերը՝ խմբավորելով բառակազմական ու քերականական հատկանիշներով: Կատարել ենք համեմատական քննություն՝ զուգահրելով բայերի իմաստները այլ բառարանների⁴ համապատասխան բայերի բացատրությունների հետ: Նախապես կազմված ցանկը համալրել ենք հիշյալ բառարաններում առկա նոր բայերով: Բաղադրյալ բայերի կապակցելիությունը քննելու համար զուգահեռաբար օգտագործել ենք «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» երկհատորյակը, Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանը», Գ. Զահուկյանի «Հայերեն ստուգաբանական

³ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Երևան, հ. 1-4, 1969-1980:

⁴ Է. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976: Սո. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան, հ. 1-4, Երևան, 1944-1945:

բառարանը»: Բայի սեռի, իմաստային և ներշարահյուսական հարաբերությունների քննությունը կատարել ենք՝ առաջնորդվելով բառարանային միավորների ուղղակի իմաստներով. փոխաբերական իմաստները քննելու դեպքում ուսումնասիրությունն իր նպատակին չէր ծառայի:

Հետազոտության արդյունքների փորձարկումը և ներդրումը: Ատենախոսության հիմնական դրույթները և եզրահանգումները պարբերաբար քննարկվել են Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի հայոց լեզվի ամբիոնում, դրույթների մի մասը զեկուցվել է միջազգային գիտաժողովներում, մյուսները լույս են տեսել հայ և արտասահմանյան գիտական հանդեսներում:

Այս բոլոր աշխատանքները լրացնելու նպատակով Erasmus+ միջազգային ծրագրով գործուղվել ենք Իսպանիայի Գրանադայի համալսարան, որտեղ կատարել ենք հայերենի և անգլերենի բայերի արժույթի զուգադրական ուսումնասիրություն:

Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, վեց գլուխներից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացություններից, օգտագործված գրականության և բառարանների ցանկից, օգտագործված աղբյուրների և նրանց համառոտագրությունների ցանկից: Ատենախոսության ծավալը 132 էջ է:

Ներածություն: Ներածության մեջ ներկայացրել ենք հարցի պատմությունը, անդրադարձել հայ և արտասահմանյան լեզվաբանության մեջ առկա հարցին վերաբերող անհրաժեշտ տեղեկություններին:

Գլուխ 1. Հայերենի բայերի արժույթայնության ընդհանուր բնութագիրը: Ժամանակակից լեզվաբանության մեջ արժույթի գաղափարը, վերագրվելով բային ու մյուս խոսքի մասերին, քննվում է լեզվական և խոսքային մակարդակներում՝ որպես գերադաս անդամի իմաստաբերականական հատկանիշներով պայմանավորված լրացումառություն, որը դրսևորվում է ենթակաառությամբ, կոչականառությամբ, ստորոգառությամբ, խնդրառությամբ և պարագաառությամբ:

Այնուամենայնիվ, արժույթի այս բնորոշումը միանշանակ չի կարող վերաբերել բոլոր լեզուներին. հայերենի և անգլերենի բայերի արժույթի զուգադրական քննության շնորհիվ, օրինակ, նկատել ենք, որ արժույթը նշված լեզուներում կարող է տարբեր լինել: Այսպես՝ ի տարբերություն անգլերենի՝ հայերենում բայի արժույթի դրսևորումներից է նաև կոչականառությունը, որի մասին վկայում է ստորոգյալի և կոչականի միջև առկա թվային համաձայնությունը⁵: Որոշակի տարբերություններ կան նաև ենթակաառության և խնդրառության ոլորտներում:

Հայերենում բայը օժտված է արժույթի բոլոր արտահայտություններով, սակայն, պայմանավորված բայիմաստով, արևելահայերենի անանցողական և անցողական բայերը կապակցելիության տարատեսակ դրսևորումներ ունեն: Ի տարբերություն չեզոք սեռի բայերի՝ ներգործական և կրավորական սեռի բայերը պարտադիր պահանջում են ենթակա և սեռի խնդիր, որով էլ պայմանավորված՝ առնվազն երկարժույթ են:

Ինչ վերաբերում է կրավորական բայերին, նշենք, որ նրանց արժույթը կառուցվածքային առումով չի փոփոխվում: Ներգործականից կրավորական փոխակերպումների դեպքում էլ բայը, պահպանելով իր արժույթը, մնում է նույն տիրույթում՝ գրեթե բոլոր դեպքերում պահանջելով նույն քանակի ստորադաս միավորներ: Տեղի է ունենում արժույթի

⁵ Տե՛ս Գ. Խաչատրյան, Կոչականառությունը որպես բայի արժույթի արտահայտություն ժամանակակից հայերենում // «Լեզու և լեզվաբանություն», № 1 (14), Երևան, 2016, էջ 5-17:

փոփոխություն՝ պայմանավորված ենթակայի և սեռի խնդրի փոխակերպմամբ, իսկ բայիմաստից բխող բնության խնդիրները մնում են նույնը:

Գլուխ 2. Անցողական բայերի ենթակառությունը: Անցողական բայերն ունեն ենթակային կապակցվելու էական առանձնահատկություններ՝ պայմանավորված և՛ բայասեռով, և՛ բայիմաստով: Նրանք ենթակաառությամբ արժույթագուրկ կարող են լինել միայն խոսքում՝ տվյալ կիրառության մեջ: Այս հանգամանքը չի բխում այդ բայերի իմաստից: Ենթակաառությունը առնչվում է բայերի դասանշային դասակարգմանը, ուստի կապակցելիության սահմանափակությունը պայմանավորված է նաև դրանով:

2.1. Ներգործական սեռի բայերի ենթակաառությունը: Ենթակաառությունը բնորոշ է ներգործական սեռի բոլոր բայերին, որոնք ենթակային կապակցվում են դեմքի և թվի քերականական կարգերի համաձայնության եղանակով: Այս բայերը ենթակաառության տեսանկյունից սահմանափակություն են դրսևորում՝ պայմանավորված հետևյալ հանգամանքներով:

1. Նախադասության կառուցվածքային առանձնահատկությունները: Այսպես՝ բայական միակցված նախադասությունների գերադաս անդամը՝ դիմավոր բայածևը, ենթակաառու չէ: Օրինակ՝ *Ասում են՝* ուռին Աղջիկ էր ինձ պես....:

2. Կապակցելիության սահմանափակությունը, որը պայմանավորված է բայերի դասանշային դասակարգմամբ, այն է՝ բայի՝ ենթակայի դասային այս կամ այն խմբին կապակցվելու կամ չկապակցվելու հատկությամբ: Ներգործական սեռի բայերի կազմում անձնանիշ ենթակա պահանջող բայերի հաճախադեպությունը պայմանավորված է սուբյեկտ-գործողություն-օբյեկտ կապով: Ըստ իրենց հետ կապակցվող ենթակայի դասային պատկանելության՝ ներգործական բայերը բաժանվում են չորս խմբի՝ ա) անձնանիշ ենթակա պահանջող բայեր, ինչպես՝ *անհծել, գիտակցել, գրպարտել, ընթերցել, մտաբերել, սրբագրել, վճռել* և այլն, բ) կենդանանիշ ենթակա պահանջող բայեր, ինչպես՝ *արածել, կրցել, կրցահարել* և այլն, գ) իրանիշ ենթակա պահանջող բայեր, ինչպես՝ *ժայթքել, շանթահարել* և այլն, դ) տարբեր դասային պատկանելության ենթակա պահանջող բայեր, ինչպես՝ *ավերել, բաժանել, բերել, գերել, հանել, սպանել, փարածել, փեսնել, ուրել* և այլն:

2.2. Դատառական բայերի ենթակաառությունը: Սկզբնատիպ չեզոք և ներգործական սեռի մի շարք բայեր, պատճառական դառնալով, փոփոխվում են թե՛ ըստ արժույթային, թե՛ ըստ դասանշային կապակցելիության: Այսպես՝ բացի նրանից, որ պատճառականությամբ պայմանավորված՝ պարտադիր ավելանում է բայի լրացումների քանակը, և բոլոր նոր ձևավորված պատճառական բայերը ստանում են ևս մեկ խնդիր լրացում, փոփոխվում է նաև նրանց ենթակաառությունը՝ ըստ դասային խմբերի:

1. Անձնանիշ ենթակաառու սկզբնատիպ չեզոք և ներգործական սեռի բայերից սերված պատճառականները.

1.1. մի դեպքում՝ պահպանում են անձնանիշ ենթակա պահանջելու հատկությունը, ինչպես՝ *ամուսնացնել, իմացնել, կարդացնել, հագցնել* և այլն: Հմմտ. **Տղան ամուսնացավ // Ծոռներն ամուսնացրին փղային.**

1.2. մյուս դեպքում՝ կապակցվում են տարբեր դասերի գոյական ենթակաների, ինչպես՝ *ամաչեցնել, գժվեցնել, դժբախտացնել, զարմացնել, թշնամացնել, ծիծաղեցնել, հիշեցնել, մոռացնել, ուրախացնել* և այլն: Հմմտ. **Տղան ծիծաղեց // Մայրը ծիծաղեցրեց փղային: Ծոռնը ծիծաղեցրեց փղային: Դեպքը ծիծաղեցրեց փղային:**

2. Իրանիշ ենթակաառու սկզբնատիպ չեզոք սեռի բայերից սերված պատճառականները.

2.1. մի դեպքում՝ դառնում են անձնանիշ ենթակաառու բայեր, ինչպես՝ *աճեցնել, եռացնել, ծաղկեցնել* և այլն: Հմմտ. **Ջուրը եռաց // Կինը եռացրեց ջուրը**:

2.2. մյուս դեպքում՝ կապակցվում են տարբեր դասերի գոյական ենթակաների, ինչպես՝ *բարակեցնել, դառնացնել, դեղնեցնել, թանձրացնել, թառամեցնել, թեժացնել, լայնացնել, խամրեցնել, խավարեցնել, մանրացնել* և այլն: Հմմտ. **Անցքը լայնացավ // Տղան լայնացրեց անցքը: Կենդանին լայնացրեց անցքը: Մեքենան լայնացրեց անցքը**:

3. Կենդանանիշ ենթակաառու բայերից քչերն են վերածվում պատճառականների: Նոր ձևավորված պատճառական բայերը կապակցվում են տարբեր դասերի ենթակաների, ինչպես՝ *խրտնել-խրտնեցնել, հաչել-հաչեցնել* և այլն: Հմմտ. **Շունը հաչեց // Տղան հաչեցրեց շանը: Կենդանին հաչեցրեց շանը: Ոտնաձայնը հաչեցրեց շանը**:

4. Տարբեր դասերի ենթակա պահանջող բայերը, պատճառական դառնալով, պահպանում են այդ հատկանիշը, ինչպես՝ *անհետացնել, աշխուժացնել, բարձրացնել, զայրացնել, զարթոնեցնել, հոգնեցնել, մեծացնել, շարացնել, ոչնչացնել, վախեցնել, փոքրացնել* և այլն: Հմմտ. **Տղան բարձրացավ: Կենդանին բարձրացավ: Մեքենան բարձրացավ // Տղան բարձրացրեց: Կենդանին բարձրացրեց: Մեքենան բարձրացրեց**:

5. Որոշ միադիմի արժույթագրուկ բայեր, պատճառական դառնալով, վերածվում են ներգործական սեռի միարժույթ բայերի՝ կապակցվելով ենթակայի դասային տարբեր խմբերի, ինչպես՝ *լուսանալ-լուսացնել, մթնել-մթնեցնել, ցրտել-ցրտեցնել*: Հմմտ. **Մթնեց // Կինը մթնեցրեց սեւյակը: Վարագույրը մթնեցրեց սեւյակը**:

6. Վերոնշյալ բայերին հակադրվում և առանձին խումբ են կենդանանիշ ենթակաառու չեզոք սեռի որոշ բայեր, որոնք, պատճառական ածանց ստանալով, չեն արտահայտում պատճառականության իմաստ և պահպանում են իրենց թե՛ արժույթային, թե՛ դասանշային կապակցելիության հատկանիշը: Սրանք բնածայնություններից սերված կենդանանիշ ենթակա պահանջող բայեր են, որոնց թե՛ ածանցավոր, թե՛ առանց ածանցի տարբերակներն ունեն նույն իմաստը, ինչպես՝ *բզզալ-բզզացնել, խրխնջալ-խրխնջացնել, ծվծվալ-ծվծվացնել, ֆշշալ-ֆշշացնել*: Հմմտ. **Մեղուն բզզում է // Մեղուն բզզացնում է**:

Քննությունը ցույց է տալիս, որ ենթակաառությամբ արժույթագրուկ պատճառական բայեր չկան: Հատկանշական է, որ պատճառական բոլոր բայերը, որոնք մատնանշում են միջնորդավորված գործողություն, կապակցվում են անձնանիշ ենթականերին (բացառությամբ 6-րդ կետի սակավաթիվ բայերի):

Գլուխ 3. Անցողական բայերի ստորոգառությունը: Քերականության մեջ բաղադրյալ ստորոգյալը դիտվում է իբրև շարահյուսական մեկ նվազագույն միավոր, նախադասության մեկ անդամ: Այնուամենայնիվ, շարահյուսական մեկ միավոր ստորոգյալը, կազմված լինելով մեկից ավելի բաղադրիչներից, իր հերթին հանդես է բերում կապակցման տարբեր դրսևորումներ: Ստորոգառությունը⁶ արժույթի դրսևորումներից է, որը հատուկ է դիմավոր բայերին:

3.1. Ներգործական սեռի բայերի ստորոգառությունը: Անցողական բայերից ստորոգառությամբ օժտված են բուն ներգործականները, որոնք իմաստային ընդհանրություն ունեն, այն է՝ իրենց բուն բայիմաստին զուգահեռ կարող են կիրառվել եղանակավորիչ բայի գործառույթով: Ընդ որում, ստորոգելիական խնդիր պահանջող բայերը սովորաբար չեն զրկվում իրենց խնդրառական արժույթից, ինչպես՝ *առաջադրել, գտնել, դիտել, ընդունել*,

⁶ Քննությունը ցույց է տալիս, որ ստորոգառությունը պատճառական բայերի արժույթի հիմնական դրսևորումներից չէ: Տեսականորեն ստորոգառու կարող են դառնալ *տալ* բայի հարադրմամբ կազմված պատճառականները, ինչպես՝ *ընտրել տալ, ընդունել տալ, հոչակել տալ* և այլն:

հաշվել, հիշատակել, հոչակել, հաստատել, ձեռնադրել, ճանաչել, նշանակել և այլն: Օրինակ՝ երբ դաշնակցում են Հոռմին, Պարթևը *ինձ հաշվում է դավաճան...* (ՆՁ): Իսկ «դիմավոր բայ+անորոշ դերբայ» կառույցի դիմավոր բայը, երբ ստորոգյառու է դառնում, այլևս ուղիղ խնդիր չի պահանջում, ինչպես՝ *երագել, կամենայ, հարկադրել, մոռանալ, որոշել, սկսել, վճռել, ցանկանալ, փորձել* և այլն: Օրինակ՝ Բավական չէ հեղեղել են ինձ ստերով, հիմա էլ կամենում են կործանել թույներով (ՍԶ):

Ուսումնասիրության ընթացքում ուշադրություն ենք դարձրել այն հանգամանքին, որ մի շարք կառույցներում, որոնցում բաղադրյալ ստորոգյալի ստորոգելին արտահայտված է բայանուն գոյականով կամ ածականով, ստորոգելին ունի երկակի դեր, ինչպես՝ *Արամը գոհ է ընկերոջից: Արամը թշնամի է Աննային: Քո այդ քայլը օգնություն է երեխաներին* և այլն: Երբ նմանատիպ կառույցները քննում ենք կառուցվածքային, բաղադրիչների միջև առկա կապակցության բնույթի տեսակետից, կարծում ենք, որ մի կողմից՝ ստորոգելին քերականորեն ստորադաս է գերադաս անդամին՝ բայ-հանգույցին, մյուս կողմից՝ գերադաս՝ անուղղակի խնդրի նկատմամբ:

Գլուխ 4. Անցողական բայերի կոչականառությունը: Կոչականառությունը՝ բայի արժույթի դրսևորումներից մեկը, բնորոշ է ներգործական սեռի այն բայերի դիմավոր ձևերին, որոնք խոսքում կոչականին կապակցվում են թվի քերականական կարգի համաձայնության եղանակով:

4.1. Ներգործական սեռի բայերի կոչականառությունը: Քանի որ կոչականառությունը առնչվում է բայերի դասանշային դասակարգմանը՝ մասնավորապես անձնանշությանը, սպասելի է, որ ներգործական սեռի բայերը կապակցելիության սահմանափակություններ են դրսևորում, այն է՝ կոչականառու են՝

1. այն բայերը, որոնք կարող են կապակցվել անձնանիշ ենթակային, ինչպես՝ *ամոքել, գրել, երագել, զեկուցել, խաբել, խոստանալ, հանձնարարել, հիշել, մոռանալ, ներել, սրել* և այլն: Օրինակ՝ *....Քո՛յր իմ, ամոքի՛ր սիրտը վշտաբեկ....* (ԱԻ, 63):

2. Այն բայերը, որոնք կարող են կապակցվել ենթակայի դասային տարբեր խմբերին, որոնցից մեկն էլ անձնանշությունն է, ինչպես՝ *բերել, դնել, լսել, հանել, սպանել, տեսնել, ուրել* և այլն: Օրինակ՝ *- Հայրի՛կ, գարնան ծիծեռնակի ձագը բնից մի՛ հանի. - Մի՛ սպանի՛ր քո աղջկան, յարին մալուկ մի՛ անի....* (ՀՇ): *- Տղե՛րք, ցամաք մի՛ կերեք, -* կատակեց զինվորներից մեկը (ՇԹ):

4.2. Պատճառական բայերի կոչականառությունը: Անցողական բայերի շարքում կոչականին կապակցվելու յուրահատկություններով առանձին խումբ են պատճառական բայերը: Հատկանշական է, որ նրանք հարցի քննության տեսանկյունից ունեն կարևոր օրինաչափություն. ի տարբերություն բուն ներգործական բայերի՝ պատճառական բոլոր բայերը կոչականառու են: Այսպես՝ կենդանանիշ և իրանիշ ենթականերին կապակցվող սկզբնատիպ չեզոք և ներգործական սեռի բայերը, պատճառականի վերածվելով, փոխում են դասանշությունը և դառնում կոչականառու: Այս հանգամանքը պայմանավորված է նրանով, որ, ինչպես ցույց տվեց ենթակաառության քննությունը, պատճառական բայերը, բացառությամբ որոշ բայերի (*բզգացնել, խրիսնջացնել* և այլն), անձնանիշ ենթակային կապակցվելու կարողություն ունեն, ինչպես՝ *արածեցնել, աճեցնել, եռացնել, թեժացնել, լրացնել, խրտնեցնել, հաչեցնել, մանրացնել* և այլն: Օրինակ՝ *-Արա՛մ, մի՛ հաչեցրու շանը: Հա՛, լավ չեմ, Գագի՛կ... կրակը թեժացրու՛....* (ՎԱ):

Գլուխ 5. Անցողական բայերի խնդրառությունը: Սեռի քերականական կարգի պահանջով անցողական բոլոր բայերը պարտադիր խնդրառությամբ առնվազն միարժույթ են: Մի շարք բայեր էլ խնդիրներ են պահանջում սեռի քերականական կարգի ու բառիմաստի

պահանջով՝ ստանալով, համապատասխանաբար, ուղիղ (սեռի) և մեկ կամ երկու անուղղակի (բնության) խնդիր:

5.1. Ներգործական սեռի բայերի խնդրառությունը: Ըստ խնդրառական արժույթի՝ ներգործական սեռի բայերը լինում են միարժույթ, երկարժույթ, եռարժույթ:

Հասկանալի է, որ տարբեր լեզուներում բայերն ունեն կապակցելիության յուրահատկություններ՝ պայմանավորված տվյալ լեզվի քերականական իրողություններով⁷: Այսպես՝ հայերենի և անգլերենի բայերի արժույթի համեմատությամբ նկատել ենք նույն իմաստով մի շարք բայերի խնդրառական տարբերություններ: Խնդրառությամբ միարժույթ որոշ բայեր հայերենում պահանջում են անուղղակի խնդիր, մինչդեռ անգլերենում՝ ուղիղ խնդիր, ինչպես՝ *խուսափել (to avoid)*, *հավատալ (to believe)*, *հիանալ (to admire)*, *ներգործել (to influence)*, *վստահել (to trust)* և այլն: Երկու լեզվում էլ առկա է *երկարժույթ բայ + ուժեղ և պարտադիր կառավարմամբ կապակցված խնդիր* կաղապար, որում նույն հարաբերությունն արտահայտված է քերականական տարբեր ձևերով: Հմմտ.՝ Արամը *հավատում է նրա խոսքերին* (հանգման խնդիր) // *Aram believes his words* (ուղիղ խնդիր):

5.1.1. Խնդրառությամբ միարժույթ ներգործական սեռի բայեր: Խնդրառությամբ միարժույթ ներգործական սեռի բայերը պարտադիր ենթադրում և/կամ պահանջում են սեռի (ուղիղ) խնդիր: Այստեղ առկա է *ներգործական սեռի բայ – ուղիղ խնդիր* կայուն կաղապար, որում ուղիղ խնդիրը արտահայտության պլանում կայուն է, բովանդակության պլանում՝ փոփոխական: Այդ բայերից են *այլակերպել, գուրգուրել, ծալել, եզրածալել, զննել, ընկալել, կռահել, ձևակերպել, նշմարել, շեշտել, սրբագրել, վճռել, փուլանել* և այլն:

5.1.2. Խնդրառությամբ երկարժույթ ներգործական սեռի բայեր: Բայի իմաստաքերականական հատկանիշների պահանջով ներգործական սեռի մի շարք բայեր, ուղիղ խնդրից բացի, ենթադրում և պահանջում են նաև մեկ անուղղակի խնդիր: Այստեղ առկա է *ներգործական սեռի բայ – ուղիղ խնդիր – անուղղակի խնդիր* կաղապարը՝ հետևյալ մասնակաղապարներով.

1. *ներգործական սեռի բայ – ուղիղ խնդիր – հանգման խնդիր.* այս բայերից են *ենթարկել, իրազեկել, խառնել, մասնափայլել, նվիրաբերել, պարվիրել, վերագրել* և այլն,

2. *ներգործական սեռի բայ – ուղիղ խնդիր – միջոցի խնդիր.* այս բայերից են *առինքնել, ամփոփել, բարեկարգել, հայթայթել, նկարագրել, նշանավորել, շրջափակել* և այլն,

3. *ներգործական սեռի բայ – ուղիղ խնդիր – անջատման խնդիր.* այս բայերից են *զարել, զանազանել, զրկել, ժառանգել, կորզել, ձերբազատել, շեղել, վանել, փրկել* և այլն,

4. *ներգործական սեռի բայ – ուղիղ խնդիր – սահմանափակման անուղղակի խնդիր.* այս բայերից են *զրպարտել, հանձնել, մարզել, մեղադրել, պարփակել* և այլն,

5. *ներգործական սեռի բայ – ուղիղ խնդիր – բաղդափոփության խնդիր.* այս բայերից են *գերազնահատել, գերադասել, համեմատել, սպորադասել* և այլն:

5.1.3. Խնդրառությամբ եռարժույթ ներգործական սեռի բայեր: Թեև Գ. Զահուկյանը խնդրառությամբ եռարժույթ անցողական բայեր չի ներկայացնում, բայց մենք առանձնացրել ենք որոշ բայեր, որոնցով ձևավորված կառույցների իմաստային լիարժեքության համար, ուղիղ խնդրից բացի, պարտադիր են երկու անուղղակի խնդիր ևս: Այլ կերպ ասած՝

⁷ Տարբեր լեզուների բայի արժույթի զուգարակական ուսումնասիրություններ կատարվել են արտասահմանյան հեղինակների կողմից: Տե՛ս M. Haspelmath & I. Hartmann. **Comparing verbal valency across languages. Valency classes in the world's languages** // *A comparative handbook*, vol. 1, Berlin: De Gruyter Mouton, 2015, pp. 41–71. M. Haspelmath. **Arguments and adjuncts as language-particular syntactic categories and as comparative concepts** // *Linguistic Discovery*, vol.12 (2), 2014, pp. 3–11. S. Sergej, Bivalent Verb Classes in the Languages of Europe: A Quantitative Typological Study // *In languages dynamics and change*, 4 (1), 2014, pp. 116-166.

բայիմաստի ամբողջական արտահայտության համար պարտադիր ենթադրվում է երեք առարկա: Այստեղ առկա է *ներգործական սեռի բայ - ուղիղ խնդիր - հանգման անուղղակի խնդիր - միջոցի անուղղակի խնդիր* կաղապար: Այս բայերից են՝ *հանձնել, փոխանցել, փակ, ուղարկել* և այլն: Օրինակ՝ Արամը նամակը *հանձնեց մայրիկին ընկերոջ միջոցով*: Նրանք *փաստաթուղթը հասցեատերերին են ուղարկում փոստով* կամ *համապատասխան աշխատողի միջոցով*:

5.2. Պատճառական բայերի խնդրառությունը քննելու համար անհրաժեշտ է հաշվի առնել նրանց և սերող բայի խնդրառական ընդհանրություններն ու տարբերությունները, որոնք ի հայտ են բերում մի շարք կարևոր կապակցական առանձնահատկություններ: Խնդրառությամբ պատճառական բայերը լինում են միարժույթ և երկարժույթ:

5.2.1. Խնդրառությամբ միարժույթ պատճառական բայեր: Խնդրառությամբ միարժույթ պատճառական բայերը պարտադիր ենթադրում և/կամ պահանջում են ուղիղ խնդիր: Այստեղ գործում է *պատճառական բայ - ուղիղ խնդիր* կայուն կաղապար, որում ընդգրկված են չեզոք սեռի՝ խնդրառությամբ արժույթագուրկ բայերից սերված պատճառականները: Այս բայերից են՝ *արթնացնել, գեղեցկացնել, եռացնել, իրականացնել, լրացնել, խորացնել, կենտրոնացնել, հնչեցնել, մոլորեցնել, նորացնել, շրտապեցնել, ոչնչացնել, որբացնել, պակասեցնել, սփորացնել, վաքացնել, վերջացնել* և այլն:

5.2.2. Խնդրառությամբ երկարժույթ պատճառական բայեր: Սերող բայի իմաստաքերականական հատկանիշների պահանջով պատճառական մի շարք բայեր, ուղիղ խնդրից բացի, պահանջում են նաև անուղղակի խնդիր, որը հիմնականում սերող բայի խնդիրն է: Այստեղ գործում է *պատճառական բայ - ուղիղ խնդիր - անուղղակի խնդիր* կաղապար՝ հետևյալ մասնակաղապարներով.

1. *պատճառական բայ - ուղիղ խնդիր - հանգման խնդիր*. այս բայերից են *ընտելացնել, ծառայեցնել, հնազանդեցնել, մտերմացնել, պարտավորեցնել* և այլն,

2. *պատճառական բայ - ուղիղ խնդիր - միջոցի խնդիր*. այս բայերից են *ապշեցնել, արդարացնել, լիացնել, հագեցնել, հերոսացնել, հիացնել, շլացնել* և այլն,

3. *պատճառական բայ - ուղիղ խնդիր - անջարման խնդիր*. այս բայերից են *առանձնացնել, բխեցնել, զգուշացնել, եզրակացնել, մեկուսացնել, փախցնել* և այլն,

4. *պատճառական բայ - ուղիղ խնդիր - սահմանափակման խնդիր*, այս բայերից են *հմտացնել, մասնագիտացնել* և այլն:

Ի տարբերություն վերոնշյալ բայերի՝ որոշ պատճառականներ խնդրառական այլ յուրահատկություններ ունեն: Այսպես՝ *անհանգստանալ, զարմանալ, հիասթափվել, ձանձրանալ, սարսափել* խնդրառությամբ միարժույթ չեզոք սեռի բայերը, որոնք պահանջում են բացառական հոլովով անուղղակի խնդիր, պատճառականի վերածվելով թեև դառնում են երկարժույթ, սակայն նրանց անուղղակի խնդիրը փոխվում է բովանդակության պլանում, ինչպես՝ *զարմանալ արարքից // զարմացնել արարքով, ձանձրանալ խաղից // ձանձրացնել խաղով*: Պատճառականի քերականական իմաստը նոր ձևավորված *անհանգստացնել, զարմացնել, հիասթափեցնել, ձանձրացնել, սարսափեցնել* բայերում փոխարինվում է միջոցի իմաստով: Հմտ. Պապը *աստուգ վախեցավ*՝ մոմի համար չխոսեց....(<U) // *Տերտերին* խունկի *ծխով* է ուզում *վախեցնել* (ՍԽ):

5.3. Ներգործական սեռի բայ-ստորոգյալների կապակցելիությունը տարբեր դասային խմբերի անուն-խնդիրների հետ: Այս ենթագլխում դասակարգել ենք անցողական բայերը՝ ըստ խնդիրների դասային խմբերի, որն առնչվում է բայի արժույթին: Ըստ իրենց պահանջած ուղիղ խնդրի դասային պատկանելության՝ խնդրառությամբ միարժույթ ներգործական սեռի բայերը բաժանվում են երեք խմբի.

1. *անձնանիշ ուղիղ խնդիր պահանջող միարժույթ բայեր*: Այս բայերի և անձնանիշ ուղիղ խնդիրների կապակցելիության քննությունը ցույց է տալիս, որ մի դեպքում կարող է դեր խաղալ բայիմաստը, մյուս դեպքում՝ բայասեռը, մեկ այլ դեպքում՝ բայի կազմությունը:

1.1. Անձնանիշ ենթակաառու ներգործական սեռի որոշ բայեր պահանջում են անձնանիշ ուղիղ խնդիրներ, ինչպես՝ *բանտարկել, բարուրել, զավակարել, զգեստավորել, թռչակավորել, ժառանգարել, ժամադրել, կալանավորել, ձերբակալել, վրարել* և այլն: Օրինակ՝ *Նա բարուրել է իր մի մատ-մատունք թռռնիկին* (ՄԽ):

1.2. Սկզբնատիպ չեզոք սեռի՝ անձնանիշ ենթակաառու բայերից կազմված պատճառականները պահանջում են անձնանիշ ուղիղ խնդիր, ինչպես՝ *այրիացնել, ամաչեցնել, դժբախտացնել, երկրասարդացնել, երջանկացնել, ծիծաղեցնել, մերկացնել* և այլն: Օրինակ՝ *Դոստոսկին կոչ էր անում երջանկացնել թեկուզև մեկ մարդու* (ԶԲ):

1.3. Եթե վերոնշյալ բայերի կապակցելիությունը անձնանիշ ուղիղ խնդիրներին պայմանավորված է բայի իմաստով և սեռով, ապա բարդ բայերի դեպքում պետք է նկատի ունենալ այլ հանգամանք ևս: Մի շարք բարդությունների բայական բաղադրիչները առանձին կիրառվելիս իրանիշ կամ տարբեր դասերի խնդիրներ պահանջող բայեր են: Սակայն ձևավորված կազմություններում նրանք չեն պահպանում այդ հատկությունը՝ անվանական բաղադրիչի պահանջով վերածվելով միայն անձնանիշ խնդիր պահանջող բայերի:

ա) Բարդ բայեր, որոնց անվանական բաղադրիչը անձնանիշ գոյական է, ինչպես՝ *ամուսնալուծել, գերեվարել, դիտերծել, ծնողազրկել, կամավորագրել, որդեգրել* և այլն: Օրինակ՝ *Բանաստեղծը որդեգրեց փոքրիկ Դոնիային* (ԱԽ):

բ) Բարդ բայեր, որոնց անվանական բաղադրիչները, ըստ իրենց իմաստի, միավորվում են միայն անձնանիշ գոյականներին բնորոշ լինելու առանձնահատկությամբ, ինչպես՝ *ահաբեկել, դիմահարդարել, զորակոչել, թագազարդել, իշխանազրկել, խելազրկել, հայրենավարել, հարցաքննել, հուսախաբել, շնորհազարդել, պաշտոնակարգել, սրտապնդել* և այլն: Օրինակ՝ *Մեզ հանձնարարված է հարցաքննել այդ մարդկանց* (ՎՇ):

2. *Իրանիշ ուղիղ խնդիր պահանջող միարժույթ բայեր*, ինչպես՝ *արծարծել, բացել, ընթերցել, կահավորել, նորոգել, պլանավորել, վերլուծել, տպագրել, փորել* և այլն: Օրինակ՝ *Մենք տխրության ու ուրախության խառն զգացմունքով տոնեցինք նրա տարեդարձը* (ԱԻ):

Այս շարքում առանձնանում են իրանիշ թանձրացական գոյականներով բաղադրված մի շարք բարդ բայեր, ինչպես՝ *ասեղնագործել, արդյունահանել, արծաթազօծել, գունավորել, եզրածալել, էջանշել, նախշազարդել, ծառահարել, կեղևազերծել, հնչյունափոխել, տարրազարդել, ոսկեզօծել* և այլն: Օրինակ՝ *Արդյունահանում են կապարի-ցինկի հանքանյութ* (<ԱՄ, 10, 110):

3. *Կենդանանիշ ուղիղ խնդիր պահանջող միարժույթ բայեր*: Սրանք սակավադեպ են՝ ի տարբերություն վերոնշյալ բայերի, ինչպես՝ *ասպանդակել, բքել, գոմել, թամբել, թևարել, թևազրկել, թևահարել, լծել, կթել, հեծնել, մորթել, որսալ, սանձել, փետրել* և այլն: Օրինակ՝ *Երբ Տավրոսը դարձավ հինգ տարեկան, հայրը մորթեց մի նախշուն ուլ...* (ԽԴ):

4. *Տարբեր դասային պարկանելիության ուղիղ խնդիրներ պահանջող միարժույթ բայեր*: Սրանք աչքի են ընկնում կապակցական զանազան հնարավորություններով, ինչպես՝ *արել, արծակել, բերել, գիտենալ, գցել, ընտրել, թողնել, հավաքել, հիշել, որոնել, վրանգել, տանել, տեսնել, տնտեսել, ուղարկել* և այլն: Օրինակ՝ *Մտնելով քաղաք, որոնեց որդուն* (ՄԽ): *Որոնեց զանգի կոճակը, բայց չգտավ* (ՄԳ): *Հայացքով որոնեց շանը...* (ՄԳ):

Ելնելով խնդիր լրացման իմաստից՝ կարող ենք նշել, որ իրանիշ գոյական-խնդիրների վերացականության և թանձրացականության սահմանները հստակ չեն, օրինակ՝ *իրականացնել ծրագիրը*: Տվյալ արտահայտության մեջ *ծրագիր* գոյականը առնչվում է

վերացականությանը այնքանով, որքանով որ այն դեռ չի իրականացել, և առնչվում է թանձրացականությանը այնքանով, որքանով այն պիտի գոյություն ունենա:

5.4. Անցողական բայերի արժույթի փոփոխության պատճառները՝ ըստ խնդրառության: Բայի արժույթը քննելու համար որոշիչ դեր ունեն ինչպես գերադաս, այնպես էլ ստորադաս անդամների իմաստաբերականական և բառակազմական հատկանիշները, լրացումների շարահյուսական ձևավորվածությունը: Առանձնացրել ենք գործոններ, որոնք կարող են արժույթի փոփոխության պատճառ դառնալ:

1. *Արժույթի փոփոխություն՝ բառաբարդմամբ պայմանավորված:* Սկզբնատիպ բայերի և նրանցով ձևավորված բարդ և նախածանցավոր կազմությունների արժույթի համեմատությունը ի հայտ է բերում մի շարք տարբերություններ խնդրառական արժույթի տեսանկյունից: Բարդ կազմություններում՝ ա) միարժույթ բայը կարող է և՛ պահպանել իր արժույթը (*կատարել – մենակատարել, կիզել – ողջակիզել* և այլն), և՛ փոփոխել այն՝ դառնալով երկարժույթ (*բեկել – վարկաբեկել, որոշել – կողմնորոշել* և այլն), բ) երկարժույթ բայը կարող է և՛ պահպանել երկարժույթ բնույթը (*զարդարել – գեղազարդել, պծնազարդել, կցել – կապակցել, մղել – նպատակամղել* և այլն), և՛ վերածվել միարժույթ բայի (*արծակել – լծարծակել, գրկել – գահագրկել, պատել – պարսպապատել* և այլն):

2. *Արժույթի փոփոխություն՝ ածանցմամբ պայմանավորված:* Նախածանցավոր կազմություններում՝ ա) միարժույթ բայը կարող է և՛ պահպանել միարժույթ բնույթը (*դաստիարակել – վերադաստիարակել, խմբել – համախմբել* և այլն), և՛ վերածվել երկարժույթ բայի (*գծել – արվագծել, ներգծել, գրել – վերագրել* և այլն), բ) երկարժույթ բայը կարող է պահպանել երկարժույթ բնույթը (*կապել – շաղկապել, տրամադրել – նախատրամադրել* և այլն):

3. *Արժույթի փոփոխություն՝ լրացման քերականական առանձնահատկություններով պայմանավորված:* Կան կառույցներ, որոնցում բային կապակցվող ստորադաս անդամների ձևավորվածությամբ է պայմանավորված բայի արժույթը: Այս դեպքում բայի արժույթը քննել ենք՝ ըստ լրացումների ձևաբանական արտահայտության և շարահյուսական կիրառության: Նախադասության բայ գերադաս անդամին լրացնող և տարբեր շարահյուսական գործառույթն ունեցող ուղիղ և անուղղակի խնդիրները, փոխակերպվելով միևնույն գործառույթն ունեցող բազմակի կամ հոգնակի անդամների, կարող են երկարժույթ բայը վերածել միարժույթի: Հմմտ. Հայ ժողովրդի *պատմությունը* Լեոն սերտորեն *կապակցել է հարևան երկրների պատմության հետ...* (ՀԱՀ, 4, 566) // Դժվարությամբ են *կապակցում մարդուն ու շրջապատը* (ԱԲ): Ակամա *համեմատեց* իր *անցյալն* այդ *շավիղի հետ* (ԱՇ) // Ազաթանզեդուսին նվիրված ուսումնասիրության մեջ *համեմատել է Ազաթանզեդուսի հայերեն և հունարեն օրինակները...* (ՀԱՀ, 3, 255):

5.5. Կազմությամբ բաղադրյալ բայերի արժույթը՝ ըստ ներքերականական արտահայտության: Այս ենթազխում ուսումնասիրել ենք կազմությամբ բարդ, ածանցավոր և արմատական ձևույթներով բայերի արժույթը՝ հաշվի առնելով բաղադրիչների միջև առկա քերականական ու իմաստային հարաբերությունների բնույթը (ներքին արժույթը):

5.5.1. Կազմությամբ բարդ բայերի արժույթը՝ ըստ ներքերականական արտահայտության: Բայական բաղադրիչ հիմքերին բառակազմական կաղապարներում լրացնում են տարբեր խնդրային հարաբերություններ: Դառնալով այս կամ այն համադրական բարդության գերադաս բաղադրիչ՝ ներգործական և չեզոք սեռի բայերը պահպանում են իրենց ներհատուկ սեռի քերականական կարգը, որն արդեն վերաբերում է ողջ բարդությանը: Սրանք հիմնականում կազմվում են «անուն կամ մակբայ + բայ» ներծևաբանական կաղապարով:

1. «Անուն կամ մակբայ + ներգործական սեռի բայեր», որոնք ձևավորում են խնդրառությանը առնվազն միարժույթ անցողական բայեր: Դրանք արտահայտվում են՝

1.1. «գոյական + բայ» մասնակաղապարով: Գոյական բաղադրիչը կարող է լինել.

1.1.1. *ուղիղ խնդիր*, ինչպես՝ *կրոնափոխել* «կրոնը փոխել տալ», *սահմանագծել* «սահմանը գծել», *վկայաբերել* «որպես վկայություն բերել» և այլն: Օրինակ՝ Եվ նրանք բոլորն էլ, ամեն մեկն իր կողմից *դիմանկարում է* իր *Կոմիտասին* (ՊՍ):

Սակայն բացառիկ դեպքերում «ուղիղ խնդիր + ներգործական սեռի բայ» կաղապարով ձևավորվում են չեզոք սեռի բայեր: Այս դեպքում բայը կապակցվում է այնպիսի իմաստով գոյական բաղադրիչի, որով բարդության նոր նշանակությունը չեզոքացնում է բայի անցողականությունը, և այն ուղիղ խնդիր ստանալու առումով դառնում է արժույթագուրկ, ինչպես՝ *բնակափոխել* «բնակության տեղը փոխել», *պաշտոնավարել* «պաշտոն վարել», *վշտակրել* «վիշտ կրել» և այլն: Օրինակ՝ Եվ ահա արյունով ու արցունքով շաղախված ձյուն-սառույցների միջից առաջինը նա *ժլարծակեց*... (ՍԿ):

1.1.2. *Հանգման խնդիր*, ինչպես՝ *կարգաբերել* «կարգի բերել», *հաշվակցել* «հաշվին կցել», *պաշտոնակարգել* «պաշտոնի կարգել», *փարրալուծել* «մասերի բաժանել» և այլն: Օրինակ՝ Ձկնորսներն շտապում էին որսած *ծուկը վաճառահանել վերագնորդներին* (ՎԹ):

1.1.3. *Միջոցի խնդիր*, ինչպես՝ *խավածածկել* «խավով ծածկել», *կացնահապրել* «կացնով կտրել», *կետանշել* «կետերով նշել» և այլն: Օրինակ՝ Հերթափոխի պեսը զարմացել էր, որ ութը վագոնիկ բետոնի *շաղախով* ահագին *փարաժություն* էր *բեփրոնապապրել* (ՍԿ):

1.1.4. *Անջատման խնդիր*, ինչպես՝ *աղազերծել* «աղից գերծել», *իշխանագրկել* «իշխանությունից գրկել», *ծարձակել* «լծից արձակել», *որակագրկել* «որակից գրկել» և այլն: Օրինակ՝ *Իգիթյանին* ընդմիշտ *որակագրկեցին* մրցավարական *գործունեությունից*:

1.1.5. *Տեղի պարագա*, ինչպես՝ *գեփառաքել* «գետի հոսանքով ուղարկել», *հրասուզել* «կրակի մեջ սուզել», *հայրենավարել* «հայրենիքից վտարել» և այլն:

Բառաբաղադրիչների սերտաձման հետևանքով կազմությանը բարդ մի շարք բայեր ներքին խնդրին զուգահեռ ստանում են լրացում՝ արտահայտված նույն բառով կամ հոմանիշ բառով, օրինակ՝ *ախպորոշել* «հիվանդությունը որոշել», *զինավառել* «զենք ու զրահ հագցնել», *վիրակապել* «վերքը կապել»: Օրինակ՝Ուրսուլան բնագրաբար ճշգրիտ *ախպորոշեց հիվանդությունը* (ԳՍ):

1.2. «Ածական + բայ» մասնակաղապարում ածական բաղադրիչը կարող է լինել.

1.2.1. *չափի պարագա*, ինչպես՝ *լիակշռել* «լրիվ՝ առանց պակասի կշռել» և այլն,

1.2.2. *ծևի պարագա*, ինչպես՝ *ամրափակել* «ամուր փակել» և այլն,

1.3. «Մակբայ + բայ» մասնակաղապարում մակբայ բաղադրիչը կարող է լինել.

1.3.1. *տեղի պարագա*, ինչպես՝ *շրջափակել* «չորս կողմից փակել» և այլն,

1.3.2. *Ժամանակի պարագա*, ինչպես՝ *կանխորոշել* «նախապես որոշել» և այլն,

1.3.3. *ծևի պարագա*, ինչպես՝ *արագագրել* «արագ գրել» և այլն,

1.3.4. *չափի պարագա*, ինչպես՝ *կրկնավաճառել* «կրկին վաճառել» և այլն:

1.4. «Դերանուն + բայ» մասնակաղապարով կազմությունները քիչ են: Սահմանափակ են նաև դերանունների տարբեր տեսակները բառակազմական այս կաղապարներում: Այստեղ հանդես են գալիս *այլ* դերանունով ձևավորված բայեր, ինչպես՝ *այլաձևել* «ձևը փոխել», *այլափոխել* «ձևափոխել», *այլաշրջել* «փոփոխել, շուտ տալ» և այլն:

1.5. «Թվական + բայ» մասնակաղապարով ձևավորված բարդությունները արտահայտում են հանգման խնդրի հարաբերություն, ինչպես՝ *երկփեղկել* «երկու մասի բաժանել», *երկպատակարել* «հակառակորդ կողմերի բաժանել» և այլն:

1.6. «Քայարմատ + բայ» մասնակաղապարը ենթադրում է բառաբաղադրիչների և՛ համադասական, ինչպես՝ *դատարանն էլ* «քննել և դատել», *կշռադատել* «մտքում կշռել՝ դատել» և այլն, և՛ ստորադասական հարաբերություն, ինչպես՝ *հյուսակցել* «հյուսելով կցել», *ոլորակնել* «ոլորելով պնդացնել», *փորագրել* «փորելով նկարել՝ գրել» և այլն:

2. «Անուն կամ մակբայ + չեզոք սեռի բայեր», որոնք ձևավորում են նոր՝ խնդրառությամբ արժույթագուրկ կամ առնվազն միարժույթ անանցողական բայեր: Սրանց ձևավորմանը մասնակցում են հիմնականում խնդրառությամբ միարժույթ չեզոք սեռի այն բայերը, որոնք պահանջում են անուղղակի խնդիրներ կամ պարագաներ: Դրանք արտահայտվում են՝

2.1. «Գոյական + բայ» մասնակաղապարով: Գոյական բաղադրիչը կարող է լինել.

2.1.1. *ենթակա*, ինչպես՝ *արյունահոսել* «արյունը հոսել» և այլն,

2.1.2. *հանգման խնդիր*, ինչպես՝ *եզրահանգել* «եզրակացության հանգել» և այլն,

2.1.3. *միջոցի խնդիր*, ինչպես՝ *զինամրցել* «զենքերով մենամարտել» և այլն,

2.1.4. *տեղի պարագա*, ինչպես՝ *լեռնամագլցել* «լեռներ մագլցել» և այլն,

2.1.5. *ձևի պարագա*, ինչպես՝ *հրապարակահոսել* «հրապարակավ խոսել» և այլն:

2.2. «Ածական + բայ» մասնակաղապարում ածական բաղադրիչը կարող է լինել.

2.2.1. *ձևի պարագա*, ինչպես՝ *դատարկաշրջել* «պարապ-սարապ թրև գալ» և այլն:

2.3. «Մակբայ + բայ» մասնակաղապարում մակբայ բաղադրիչը կարող է լինել.

2.3.1. *տեղի պարագա*, ինչպես՝ *հեպրդիմել* «դեպի հետ դիմել» և այլն,

2.3.2. *ժամանակի պարագա*, ինչպես՝ *կանխազգուշանալ* «նախօրոք զգուշանալ»,

2.3.3. *ձևի պարագա*, ինչպես՝ *կիսաժպտալ* «կիսով չափ ժպտալ» և այլն:

3. Կրկնասեռ բայերը, համադրական բարդության բաղադրիչ դառնալով, պահպանում են բայիմաստից բխող տվյալ սեռի քերականական կարգի արտահայտությունը: Այսպես՝ *նայել* կրկնասեռ բայով բաղադրված *թերանայել* բայը նույնպես կրկնասեռ է՝ «թերի նայել» չեզոք և «թերի քննել» ներգործական իմաստներով: *Կոծել* կրկնասեռ բայով կազմված *բախտակոծել* (իր բախտի վրա լաց լինել), *լացուկոծել* (լացուկոծ անել) բայերը չեզոք սեռի են՝ «ողբալ» չեզոք իմաստով, իսկ *նմբակոծել* (ոռամբերով հարվածել), *գանակոծել* (սաստիկ ծեծել) բայերը՝ ներգործական՝ «բախել, խփել» իմաստով: Հմնտ. Հիշում էին իրենց տները, հարագատներին ու *լացուկոծում* դառնաղի (ՄԻ) // Իսկ *ինձ* հայրս անողբաբար *գանակոծում էր* (ԱԶ):

5.5.2. Կազմությամբ ածանցավոր բայերի արժույթը՝ ըստ ներքերականական արտահայտության: Բայակազմության մեջ արժույթի տեսանկյունից կարևոր դեր ունի ածանցումը: Ժամանակակից հայերենում բայակազմությանը մասնակցում են *առ-*, *արդ-*, *ապ-*, *բաց-*, *գեր-*, *ընդ*, *հակ-*, *համ-*, *հար*, *հեղ-*, *նախ-*, *ներ-*, *շար-*, *ստոր-*, *վեր-*, *տար-*, *տրամ-*, *փոխ-* նախածանցները՝ կերպային տարբեր իմաստներով: Բայերը նախածանցավոր կազմություններում պահպանում են սեռի քերականական կարգի արտահայտությունը:

Նախածանցները, բաղադրվելով ներգործական սեռի բայերին, ձևավորում են խնդրառությամբ՝

ա) միարժույթ ներգործական սեռի բայեր, ինչպես՝ *արտադրել*, *ընդարձակել*, *ընդհատել*, *համակարգել*, *հեղաշրջել*, *նախաձեռնել*, *շարադրել*, *ստորագրել*, *վերաբացել* և այլն: Օրինակ՝ Ես *համակրեցի* այդ երիտասարդ *տղային* (ՎԱ):

բ) Երկարժույթ ներգործական սեռի բայեր, ինչպես՝ *արտամղել*, *գերադասել*, *գերակապարել*, *ընդօրինակել*, *հակակշռել*, *համակցել*, *նախապատրաստել*, *շողկապել*, *ստորադասել*, *վերագրել*, *տրամադրել* և այլն: Օրինակ՝ Գայանեի հայրը, նկարիչ Աշոտ Մամաջանյանը իր *արվեստանոցը տրամադրեց Մինասին* (ՌԶ):

Նախածանցները, բաղադրվելով չեզոք սեռի բայերին, ձևավորում են խնդրառությամբ՝

ա) արժուագազուրկ չէզոք սեռի բայեր, ինչպես՝ *ապագայնանալ, առկայծել, համաքայլել, հարաբուրել, նախաճաշել, ներանձնանալ, վերակենդանանալ, վերադառնալ* և այլն: Օրինակ՝ Ներսիսյանը *նախաճաշեց*, խմեց սուրճը (ԳԲ):

բ) Միարժույթ չէզոք սեռի բայեր, ինչպես՝ *արտաբխել, ընդդիմադրել, համագործակցել, նախազգուշանալ* և այլն: Օրինակ՝ Ռաշիդն ամենից շատ հենց *դրանից էր նախազգուշանում* (ՍԳ):

Կրկնասեռ բայերով բաղադրված նախաձանցավոր կազմությունները կամ արտահայտում են կրկնասեռություն, ինչպես՝ *արտաբուրել, գերազանցել, վերայցելել* և այլն, կամ պահպանում են այն սեռի քերականական իմաստը, որի նշանակությունն է նոր ձևավորված բայի մեջ արտահայտված, ինչպես՝ *վերանայել, փարախոսել* և այլն: Այսպես՝ *ընդդիմախոսել, փարախոսել* կազմությունները պահել են *խոսել* կրկնասեռ բայի չէզոք նշանակությունը, *վերականգնել* ներգործական բայը՝ *կանգնել* բայի «կանգնեցնել, կառուցել» գրաբարյան իմաստը, *այցելել* կրկնասեռ բայը *վերայցելել* կազմության մեջ պահպանել է կրկնասեռությունը, իսկ *փոխայցելել* կազմության մեջ՝ չէզոք սեռի քերականական իմաստը: *Ներապրել, վերապրել* ներգործական բայերում *ապրել* բազմիմաստ բայի ներգործական «զգալ» իմաստն է արտահայտված, *վերանայել* ներգործական բայում՝ *նայել* կրկնասեռ բայի «նորից քննել» իմաստը: Օրինակ՝ Նա խառնվեց այդ երգերը ստեղծող ժողովրդի հետ, *ներապրեց* նրա երգերը... (ԱԻ): Ի՞նչ եղավ Հուսիկը, ինչպես՝ *վերապրեց սովը* (ԴԴ): Հարկավոր էր որոշ *պայմանագրեր վերանայել*:

Բացառիկ դեպքերում նախաձանցավոր բաղադրությունների բայական բաղադրիչը չի պահպանում իր սեռի քերականական իմաստը: Այսպես՝ *ցուլել* չէզոք սեռի բայով բաղադրված *արտացոլել* բայը ներգործական սեռի է՝ «անդրադարձնել, արտահայտել» իմաստներով, *նեխել* չէզոք սեռի բայով կազմված *հականեխել* բայը ներգործական սեռի է՝ «նեխեցնել» ներգործական իմաստով, *կշռել* ներգործական սեռի բայով բաղադրված *գերակշռել* բայը ունի չէզոք նշանակություն՝ «գերազանցել» իմաստով, ոչ թե *կշռել* բայի ուղիղ իմաստով: Օրինակ՝ Պուլսինին ձգտել է ճշմարտացիորեն *արտացոլել իրականությունը* (ՀՍՀ, 9, 464): Էլուշը լվացվեց, օղեկոլոնով *հականեխեց* իր *ծեղքերը*, և նրանք սկսեցին ճաշել (ՆԶ): Հետագայում նրա հասարակական հայացքներում *գերակշռել* են պահպանողական միտումները (ՀՍՀ, 8, 214):

Վերջաձանցավոր կազմությունները ավելի սակավ են, քան նախաձանցավորները: Ժամանակակից հայերենի վերջաձանցներից բայակազմության մեջ հաճախադեպ են - (ա)վոր⁸, -արար⁹, -արի¹⁰, -պարհիկ¹¹, -որդ¹², -ուր¹³ ածանցները:

⁸ Ծագել է նախագրաբարյան շրջանում *բերել* ներգործական սեռի բայի *բեր* արմատի մի երկրորդ *բոր* ձևի՝ երկու ձայնավորների միջև *բ>վ* հնչյունափոխությամբ, սակայն ոչ թե *բերող*, այլ *կորող*, *ունեցող* նշանակությամբ (տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Ե., 1965, էջ 225-226):

⁹ Ծագել է գրաբարյան *առնել (անել)* ներգործական սեռի բայի անցյալ կատարյալ ժամանակի հիմքից՝ *ար* արմատի կրկնությամբ (տե՛ս Ա. Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզու. բառակազմություն, դարձվածաբանություն, բառագիտություն, Ե., 1990, էջ 251):

¹⁰ Ծագել է մեր լեզվի պատմական գաղափարային շրջանում *հարանել* ներգործական սեռի բայի *հար* արմատից (տե՛ս Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 226):

¹¹ Ծագել է ներգործական սեռի *պարել* բայի *պար* արմատից՝ *-իկ* մասնիկի հավելմամբ (տե՛ս Ա. Մուրվալյան, Հայոց լեզվի բառային կազմը, Ե., 1955, էջ 297: Ա. Մարգարյան, նշվ. աշխ., էջ 276):

¹² Ծագել է *որդ/որթ* (կովի կամ եղնիկի ձագ, հորթ, մոզի) արմատից (տե՛ս Հր. Աճառյան, Հայերէն արմատական բառարան, հ. III, Ե., 1977, էջ 576, 578):

¹³ Ծագել է նախագրաբարյան շրջանում *հուր* գոյականից՝ հնչյունափոխության և իմաստափոխության արդյունքում (տե՛ս Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 226):

Վերջաձանցներով բաղադրված բայերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բայարմատներից ծագած վերջաձանցները՝ *-(ա)վոր*, *-արար*, *-ապ*, *-պատրիկ*, անգամ ձևահմաստային փոփոխություններ կրելով, իմաստի մթագնում ապրելով, սկզբնաղբյուր բայի հետ պահպանել են իրենց իմաստաքերականական կապերը: Վերացարկվելով, գրկվելով իրենց նյութական իմաստից՝ նրանք պահպանում են սեռի քերականական կարգի հատկանիշը և կերտում ներգործական սեռի բայեր, ինչպես՝ *երաշխավորել*, *իմաստավորել*, *կարգավորել*, *շնորհավորել*, *հանձնարարել*, *մատակարարել*, *ակոսարել*, *էջարել*, *կրծարել*, *մասնարել*, *բազմապարել*, *կրկնապարել*, *տասնապարել* և այլն: Այս բայերը մի բանով օժտելու (*-ավոր*), մի բանից գրկելու (*-ապ*), մի բան անելու (*-արար*) իմաստների արտահայտման համար պահանջում են այդ գործողությունների կատարման համար կողո առարկա: Բացառություն են չեզոք սեռի *ակնավորել* = *ակնավորվել* (*բողոքներ արձակել*), *տնկավորել* = *տնկավորվել*, *ընկնավորել* = *ընկնավորվել* բայերը, որոնք ունեն նաև նույն իմաստով կրավորակերպ չեզոք տարբերակներ: Իսկ անվանական արմատներից ծագած *-որր*, *-որ* վերջաձանցները կերտում են և՛ ներգործական, ինչպես՝ *կեղտորել*, *մրորել*, և՛ չեզոք սեռի բայեր, ինչպես՝ *ամպորել*, *ժանգորել*:

5.5.3. Ծագամբ արմատական ձևոյթներով բայերի արժույթը՝ ըստ ներքերականական արտահայտության: Բայական համադրական բաղադրությունների գերադաս բաղադրիչը շատ հաճախ ոչ թե առանձին բայ է, այլ արմատական ձևոյթ: Նրանցից բայակազմությանը մասնակցում են *արկ*, *առ*, *ած*, *բան*, *գույն*, *կալ*, *կից*, *հար*, *միտ*, *վար*¹⁴ ձևոյթները: Բաղադրվելով հիմնականում գոյականների և բայահիմքերի՝ ավելի ընդհանուր, վերացարկված նշանակություն են արտահայտում, և այս դեպքում անվանական բաղադրիչն է բնորոշում բայի բուն իմաստը:

Գրաբարյան ներգործական սեռի *արկանեմ* (դնել, ձգել, նետել), *հարկանեմ* (բախել, հարվածել), *վարեմ* (առաջնորդել, քաշել), *առնում* (առնել, գնել, վերցնել), *ածեմ* (բերել, վարել, շարժել) բայերի արմատներից են *արկ*, *հար*, *վար*, *առ* և *ած* ձևոյթները, որոնց բաղադրամբ ձևավորվում են հիմնականում խնդրառությամբ միարժույթ անցողական բայեր, ինչպես՝ *խուզարկել*, *դանակահարել*, *ղեկավարել*, *կիրառել*, *տրածել* և այլն: Չեզոք սեռի են *թևարկել*, *ծայնարկել*, *թևահարել*, *ակնածել*, *աչտռել*, *թևածել* բայերը, որոնք, արտահայտելով ավելի մասնավոր նշանակություն, ձեռք են բերում անանցողական բայերին հատուկ քերականական իմաստ: Հմմտ. Նա որոշեց մեկ անգամ ևս *փորձարկել* համբույրի իր *տեսությունը* (ՎՍ) // Քրմուհիները *ծայնարկում էին* եռանդով (ՍԲ): Մի հազարացի ավազակ *դանակահարեց* Ջարեհ *իշխանին*... (ԳՍ) // Սայվլորի շրթից պոկվեց «Ուրմուլին» Եվ *թևահարեց* դաշտերի վրա (ՀՍ):

Կալ ձևոյթը գրաբարյան *կալնում* (տիրել, պատել, ունենալ) ներգործական սեռի բայի արմատից է: Սակայն ի տարբերություն վերոնշյալ բայարմատներով ձևավորված բայերի՝ *կալ* արմատով բաղադրված բայերն ունեն սեռի քերականական կարգի տարբեր դրսևորումներ: Այսպես՝ «տիրել, պատել» իմաստներով ձևավորվում են անցողական բայեր, ինչպես՝ *աշխարհակալել*, *խցանակալել* և այլն, իսկ «ունենալ» իմաստով՝ անանցողական բայեր, ինչպես՝ *արմատակալել*, *խորակալել* և այլն: Հմմտ. Մի ժամանակ նա *ֆերմա էր վարձակալում* Պրովանսում... (ԻԲ) // Անձրևներից հետո բլուրները այնպես են *խորակալել*...

¹⁴ Այս ձևոյթների ստուգաբանությունը և իմաստների բացատրությունը տե՛ս համապատասխան բառառոգվածների տակ հետևյալ բառարաններում. Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Ե., 1971, 1973, 1977, 1979, հ. I-IV: Նոր բառգիրք հայկազգան լեզվի, Ե., 1979, 1981, հ. I, II: Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., 2010:

(ՎԱ): Կան որոշ բայերի կրավորաձև չեզոք տարբերակները, ինչպես՝ *կեղևակալել-կեղևակալվել, կեղտակալել-կեղտակալվել* և այլն: Կարելի է ենթադրել, որ բոլոր չեզոք սեռի բայերը կլինեն կրավորաձև տարբերակով՝ *դարդակալվել, թխակալվել*, քանի որ արտահայտում են «դարդով լցվել», «թխսով պատվել» իմաստները:

Քան (խոսք) ձևույթը *խոսել* կրկնասեռ բայի նշանակությամբ ձևավորում է թե՛ խնդրառությամբ միարժույթ անցողական բայեր, ինչպես՝ *գովաբանել, իմաստաբանել* և այլն, թե՛ խնդրառությամբ միարժույթ կամ արժույթագուրկ անանցողական բայեր, ինչպես՝ *դատարկաբանել, զվարճաբանել* և այլն: Հմմտ. Քաղաքավարության համար միայն թեթև կերպով *գովաբանեց* նրա *քաջությունը*... (ՆԴ) // -Վայելի՛ր իմ հացն ու գինին, քո՛ւրմ, և շարունակիր *դատարկաբանել* (ՍԽ):

Գույն, *միտ* անվանական, *կից* կապական արմատների բաղադրմամբ ձևավորվում են թե՛ խնդրառությամբ միարժույթ անցողական բայեր, ինչպես՝ *հնարամտել, թերամտել, գիտակցել, զուգակցել* և այլն, թե՛ միարժույթ կամ արժույթագուրկ անանցողական բայեր, ինչպես՝ *այլագունել, գորշագունել, երկմտել, մեծամտել, դաշնակցել, զրուցակցել*, թե՛ կրկնասեռ բայեր, ինչպես՝ *մթնագունել* «1. նբ. մթնեցնել, 2. չբ. մթնագույն դառնալ», *մոսլյագունել* «1. նբ. մուգ գույն տալ, մոսլեցնել, 2. չբ. մոսլյագույն դառնալ» և այլն: Հմմտ. Այդ պայմանագրով խալիֆայությունը *հեպամտել* է հայերին սիրաշահելու *նպատակ* (ՀԱՀ, 6, 154) // Քաշվում էր լուսանկարվել, չասեն՝ կոլխոզի նախագահը *մեծամտում է*... (ՁԽ): Նա չէր կասկածում, թե նախարարները *կգիտակցեն* այդ *ուժը*... (ԴԴ) // ...ու *ծարավի հետ* սովը *դաշնակցեց*՝ ամենագորը (ՊՍ):

Սակայն այն կազմությունները, որոնցում արտահայտված է *կցել* բայի «կպցնել, միացնել» ներգործական իմաստը, և բաղադրությունը հեշտությամբ փոխակերպվում է բայական բառակապակցության, պահպանում են ներգործական սեռի քերականական իմաստը, ինչպես՝ *գամակցել* «գամերով կցել՝ միացնել», *եզրակցել* «եզրերը միացնել», *կապակցել* «իրար կապել», *հաշվակցել* «որևէ բան մի բանի հաշվին կցել» և այլն: Օրինակ՝ Արևմտյան Հայաստանում թուրք, իշխանություններն ու կալվածատերերը հայ *գյուղացիությանը ամրակցել էին* հողին (ՀԱՀ, 3, 132):

Ժամանակակից հայերենում այս ձևույթների՝ արմատ թե ածանց լինելու վերաբերյալ կարծիքները տարբեր են: Յանկաջած պարագայում սրանք բայակազմության ժամանակ պահպանում են իրենց արմատի նախնական իմաստաքերականական հատկանիշները. *արկ, հար, վար, առ, ած* ձևույթները, որոնք երբեմնի ներգործական սեռի բայերի արմատներ են եղել, պահպանում են իրենց ներհատուկ սեռի քերականական հատկանիշը և կերտում հիմնականում ներգործական սեռի բայեր: Ասվածին հակառակ՝ անվանական և կապական հիմքերի (*քան, գույն, միտ, կից*) բաղադրմամբ ձևավորվում են թե՛ ներգործական, թե՛ չեզոք սեռի բայեր:

Գլուխ 6. Անցողական բայերի պարագաառությունը: Արժույթի արտահայտության միջոցներից մեկն է պարագաառությունը: Մեր հարցի քննության տեսանկյունից կարևոր են այն պարագա լրացումները, որոնք արտահայտում են ուժեղ և պարտադիր կառավարմամբ կապակցված տեղի պարագայի քերականական իմաստ: Դրանք կարող են արտահայտված լինել տեղանիշ գոյականների հոլովաձևերով կամ կապական կապակցություններով:

6.1. Ներգործական սեռի բայերի պարագաառությունը: Տեղի պարագաառությամբ օժտված ներգործական սեռի բայերով կառույցները ունեն *ներգործական սեռի բայ – ուղիղ խնդիր – տեղի պարագա* կայուն կաղապար, որում ուղիղ խնդիրը արտահայտության պլանում կայուն է, մինչդեռ իմաստային պլանում՝ փոփոխական: Տեղի պարագա պահանջող բայերը կարող են լինել բազմարժույթ՝ պահանջելով մեկից ավելի տարաբնույթ պարագաներ՝

սկզբնակետի, բուն, անցման, վերջնակետի, ինչպես՝ առաքել, առաջնորդել, արտահանել, հրավիրել, ներմուծել, տեղափոխել, փոխադրել և այլն: Սակայն հազվադեպ են բայի՝ ենթադրվող տեղի պարագաների միաժամանակ գործածության դեպքերը: Օրինակ՝ *Կասպից ծովի վրայով, Վոլգայով Պարսկաստանից Ռուսաստան էին արտահանում մետաքս, բոժոժ* (<ԱՄ, 2, 651):

6.2. Պատճառական բայերի պարագաառությունը: Առանձնացնելով պարագա լրացում պահանջող պատճառական բայերը և կատարելով պարագատական արժույթի համեմատություն՝ հանգում ենք հետևյալ եզրակացության. բուն ներգործական և չեզոք սեռի բայերը և նրանցով սերված պատճառականները միօրինակություն են հանդես բերում պարագաառության տեսանկյունից՝ ի տարբերություն պատճառական բայերի խնդրառության, որի դեպքում, ինչպես տեսանք, նրանք տարատեսակ իմաստաբերականական փոփոխությունների են ենթարկվում:

Այս դեպքում բարձրանալ **որպեղից ուր** // բարձրացնել **որպեղից ուր, փախչել որպեղից որպեղով ուր** // փախցնել **որպեղից որպեղով ուր** և նմանատիպ այլ արտահայտություններում որոշիչ դեր է խաղում բայիմաստը: Համեմատվող կառույցներում բայերը ցույց են տալիս այնպիսի գործողություն, որի կատարման համար վերոնշյալ բայերի՝ ուժեղ և պարտադիր կառավարման պահանջով դրվող պարագաների միջև իմաստային տարբերություն չկա: Հմտ. Թռավ հեծավ նժույգ իր ձին, դաշպըր իջավ արյունի (<Թ) // Ու երկիր իջեցրեց նվիրական զամբյուղը երկնային ծերունին (<Թ):

Եզրակացություններ

Ժամանակակից արևելահայերենի անցողական բայերի արժույթի քննությունից հանգում ենք մի շարք եզրակացությունների:

1. Բայերի կապակցելիության բացահայտումը առաջին հերթին ունի կիրառական նշանակություն, քանի որ այն հնարավորություն է տալիս ոչ միայն քերականորեն, այլև իմաստաբանորեն ճիշտ խոսք կառուցելու և արտահայտելու: Այն նշանակալի և օգտակար է լեզուներ ուսումնասիրելիս, քանի որ յուրաքանչյուր լեզու ունի կապակցական իր հնարավորությունները:

2. «Արժույթ» լեզվաբանական հասկացությունը արժևորվել է տարբեր լեզվաբանների կողմից, որոնք, կարևորելով խոսքի կապակցական առանձնահատկությունները, սահմանել են շարահյուսական կաղապարների հնարավոր ստորադասական սահմանները:

3. «Արժույթ» հասկացությունը, առնչվելով բայերի իմաստային-քերականական առանձնահատկություններին, սերտորեն կապված է դասի և սեռի իմաստային-քերականական կարգերին:

4. Բայի արժույթը առնչվում է բայակազմությանը, որում կարևորվում են ինչպես բայարմատները, այնպես էլ բայածանցները, քանի որ բայի ներքին ձևը հուշում է նրա կապակցական հնարավորությունները:

5. Անցողական բայերի արժույթը խոսքի տարբեր ոճերում ունենում է տարաբնույթ դրսևորումներ՝ ըստ բայի տարբեր իմաստների: Այս շարքում հատկապես հետաքրքիր են բազմիմաստ բայերը, որոնք զանազան իմաստներով կիրառվելիս դրսևորում են կապակցելիության տարբերություններ:

6. Հայերենում «արժույթ» հասկացությունը առնչվում է ենթակաառությանը, ստորոգառությանը, խնդրառությանը, պարագաառությանը և կոչականառությանը, որոնք տարբեր զուգորդումներով են հանդես գալիս խոսքում՝ ըստ գերադաս անդամի սեռային և իմաստային պահանջների:

7. Ըստ արժույթի քանակի՝ ներգործական սեռի բայերը լինում են երկարժույթ, եռարժույթ և հազվադեպ քառարժույթ: Հատկանշական է, որ կապակցվող միավորներից ենթական, ստորոգելին, կոչականը մենիմաստ են, իսկ խնդիրներն ու պարագաները՝ բազմիմաստ:

8. Անցողական բայերը հայերենում առանձնանում են լրացումառության բազմազանությամբ: Նշենք, որ ներգործական սեռի բայ ունեցող կառույցներում խոսքային պարտադիր արտահայտություն ունի սեռի (ուղիղ) խնդիրը:

9. Անցողական բայերը կապակցվում են մենաբառ և բազմաբառ արտահայտություն ունեցող լրացումների. վերջիններս կարող են արտահայտվել բազմակի անդամներով, բառակապակցությամբ և նախադասությամբ:

10. Անցողական բայերի ենթակառուցությունը բնութագրվում է տարբեր դասերի գոյականներին կապակցվելու հնարավորությամբ, որոնց մեջ հիմնական է կապակցելիությունը անձանիշ ենթականերին: Այս շարքում պարտադիր անձանիշ ենթակառու են պատճառական բայերը:

11. Անցողական բայերը կոչականառության տեսակետից անմիօրինակություն են դրսևորում: Ի տարբերություն բուն ներգործական բայերի՝ պատճառական բոլոր բայերը կոչականառու են: Խոսքային վերլուծությունից պարզ է դառնում, որ կոչականառությունը նպաստում է ենթակայի գեղջմանը, քանի որ կապակցվում է 2-րդ դեմքով արտահայտված բայերին, որոնց ենթական ենթադրելի է:

12. Անցողական բայերի ստորոգառությունը ի հայտ է գալիս խոսքային շարույթում, որում որպես ստորադաս բաղադրիչի արտահայտության միջոց կիրառվում է ստորոգելիական խնդիրը կամ անորոշ դերբայը: Նկատելի է, որ ի տարբերություն անորոշ դերբայ պահանջող ստորոգառու բայերի՝ ստորոգելիական խնդիր պահանջող բայերը չեն զրկվում խնդրառական արժույթից:

13. Խնդրառական արժույթով բնութագրվում են հայերենի գերազանցապես բոլոր անցողական բայերը, որոնց շարքում շատ են խնդրառությամբ միարժույթ բայերը: Թեև սրանք թվով գերազանցում են խնդրառությամբ երկարժույթ և եռարժույթ բայերին, սակայն վերջիններիս մեծ մասը գործածությամբ և հաճախադեպությամբ առավել գործուն է: Կապակցական մեծ հնարավորություններով ու զանազան դրսևորումներով առանձնանում են հատկապես խնդրառությամբ երկարժույթ անցողական բայերը, որոնք ժամանակակից հայերենի բառապաշարի գործուն շերտի մասն են: Բացի դրանից՝ հենց այս բայերի մասնակցությամբ է տեղի ունենում բայական համադրական բարդությունների մեծ մասի կազմությունը:

14. Պարագաառությունը զուգահեռվում է արժույթի բոլոր դրսևորումներին՝ հանդես գալով տարբերությամբ կապակցություններում: Հայերենում որոշ ներգործական սեռի բայերի պարտադիր կառավարման եղանակով կապակցվում են ոչ միայն տեղի, այլև պատճառի և նպատակի պարագաները:

15. Անցողական բայերի կապակցական համատեղելիությունը տարբեր դասերի խնդիրների հետ, բայիմաստից բացի, պայմանավորված է նաև բայասեռով և բայակազմությամբ: Ենթական և խնդիրը դասանշային փոխկապակցվածության մեջ են: Ի տարբերություն ենթակառույթյան դասանշության՝ խնդրառության դասանշությունը կարող է հանդես գալ ինչպես միագիծ կապակցություններում, այնպես էլ բազմաճյուղ. ներգործական սեռի բայը կարող է պահանջել կա՛մ միայն ուղիղ խնդիր, կա՛մ երկու և ավելի խնդիրներ, որոնք բնութագրվում են դասանշային տարբեր դրսևորումներով:

16. Խոսքային վերլուծությունները վկայում են, որ դասային սահմանափակումները վերաբերում են բառերի ուղղակի իմաստով կիրառություններին, քանի որ փոխաբերական իմաստով կիրառությունների դեպքում բայերի կապակցական հնարավորությունները սահմանափակումներ գրեթե չունեն:

17. Հայ գեղարվեստական և հրապակախոսական լեզվի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գրական արևելահայերենի անցողական բայերի արժույթը հատկապես դրսևորվում է բայ + խնդիր կապակցություններով՝ պայմանավորված խնդրի պարտադիր լինելու հանգամանքով: Այս դեպքում ենթակաառությունը հակադրվում է խնդրառությանը հայերենի զեղչման հնարավորությամբ՝ պայմանավորված բայի ներունակ լինելու հանգամանքով: Հենց այստեղ է ի հայտ գալիս թեքակցական և անջատական լեզուների տարբերությունը. անջատական լեզուներում՝ մասնավորապես անգլերենում, ենթակայի արտահայտությունը պարտադիր է:

Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. Խաչատրյան Գ., Մուրադյան Ա., Արժույթի ըմբռնումը արտասահմանյան և հայ լեզվաբանության մեջ, ՎՊՀ գիտական տեղեկագիր, պրակ Ա, Երևան, 2016, էջ 59-68:
2. Մուրադյան Ա., Կազմությամբ բարդ բայերի արժույթը՝ ըստ ներքերականական արտահայտության, ՎՊՀ գիտական տեղեկագիր, պրակ Ա, Երևան, 2017, էջ 47-56:
3. Մուրադյան Ա., Կազմությամբ ածանցավոր բայերի արժույթը՝ ըստ ներքերականական արտահայտության, Միջազգային գիտաժողով «Լեզու, խոսք, իրականություն» նվիրված է. Աթայանի ծննդյան 85-ամյակին, Գիտաժողովի նյութեր, Երևան, 2017, էջ 210-221:
4. Khachatryan G., Muradyan S., The Valency of Transitive Verbs According to Object-Adjunction in Modern Armenian, The American scholarly journal Cross-Cultural Studies: Education and Science, Volume 3, Issue II, June, 2018, pp. 98-105.
5. Մուրադյան Ա., Ծագմամբ արմատական ձևույթներով բայերի արժույթը՝ ըստ ներքերականական արտահայտության, Կանթեղ, Գիտական հոդվածներ, 2(75), Երևան, 2018, էջ 83-89:
6. Մուրադյան Ա., Դիտարկումներ անցողական բայերի արժույթի փոփոխության մասին, Զահուկյանական ընթերցումներ, Գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2018, էջ 218-228:
7. Մուրադյան Ա., Ներգործական սեռի բայերի պարագաառական արժույթը ժամանակակից հայերենում, ՎՊՀ գիտական տեղեկագիր, պրակ Ա, Երևան, 2018, էջ 33-40:
8. Մուրադյան Ա., Ներգործական սեռի բայ-ստորոգյալների կապակցելիությունը տարբեր դասային խմբերի անուն-խնդիրների հետ, Գիտական Արցախ, N1(2), Երևան, 2019, էջ 335-342:
9. Ենթակաառությունը որպես բայի արժույթի արտահայտություն ժամանակակից հայերենում, Միջազգային գիտաժողով՝ նվիրված ՎՊՀ-ի հիմնադրման 50-ամյակին և Հ. Թումանյանի ծննդյան 150-ամյակին, Միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2019, էջ 92-100:

МУРАДЯН СИЛЬВА АЛЬБЕРТОВНА
ВАЛЕНТНОСТЬ ПЕРЕХОДНЫХ ГЛАГОЛОВ
СОВРЕМЕННОГО ВОСТОЧНОАРМЯНСКОГО ЯЗЫКА

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.02.01 – «Армянский язык»

Защита состоится 27 сентября 2021 г. 15:00 на заседании специализированного совета ВАК 019 по лингвистике, действующего в Институте языка им. Р. Ачаряна НАН РА (адрес: Ереван, 0015, ул. Григора Лусаворича 15)

РЕЗЮМЕ

Цель диссертации. Основная цель исследования – научная оценка когерентных возможностей восточноармянских переходных глаголов на основе взаимосвязи трех языковых уровней: лексического, морфологического и синтаксического.

Актуальность исследования. В армянском языке глагол, являясь основной единицей формирования речи, выделяется различными проявлениями когерентных возможностей. Актуальность данной работы обусловлена недостаточной изученностью когерентных возможностей переходных глаголов современного восточноармянского языка.

Научная новизна и практическая ценность диссертации. Основываясь на исследованиях, проведенных в армянской лингвистике и учитывая многообразие когерентных возможностей глаголов, мы решили обратиться к когерентным возможностям переходных глаголов на семантическом и грамматическом уровнях с новой точки зрения. Теоретические и практические выводы, полученные в ходе проведения исследования в рамках диссертации, могут быть использованы для создания словаря валентности глаголов: размещенная там информация должна соответствовать требованиям, которые относятся к речевой когерентности. Кроме того, результаты диссертации могут быть использованы в теоретических и практических курсах грамматики как в процессе непосредственного обучения, так и при составлении учебных пособий, справочников и учебников.

Структура диссертации. Диссертация состоит из Введения, 6 глав с соответствующими разделами (подглавами), Заключения, Списка сокращений и Списка использованной литературы. Общий объем работы составляет 132 страницы.

Введение: Во Введении представлена история вопроса, отражена необходимая информация по данному вопросу, имеющуюся в армянской и зарубежной лингвистике. Работа изложена на основе данных ряда публикаций, находящихся в научном обращении.

Глава 1. Общая характеристика валентности армянских глаголов. В современной лингвистике понятие валентности, относящееся к глаголу и другим частям речи, рассматривается на языковом и вербальном уровнях как способность управления дополнения, обусловленная семантико-грамматическими особенностями главного компонента, что проявляется в способности управления подлежащего, обращения, сказуемого, дополнения и обстоятельства.

Однако это определение валентности не может быть однозначно применено ко всем языкам: валентность глагола, исходя из отличий грамматической природы языков, различна.

В армянском языке глагол наделен всеми видами валентности, но, в зависимости от значения глагола, переходные и непереходные глаголы восточноармянского языка

проявляют разные формы когерентности. В отличие от средневозвратных глаголов, действительные и каузальные глаголы обязательно требуют наличие подлежащего и каузатива/декаузатива, поэтому они, по крайней мере, двухвалентны. Исследования показывают, что ни один из армянских глаголов не может связываться со всеми единицами валентности.

Глава 2. Способность управления подлежащего переходных глаголов. В данной главе исследованы основные особенности когерентности действительных и каузальных глаголов к подлежащему, которые обусловлены как залогом, так и семантикой глаголов.

Глава 3. Способность управления сказуемого переходных глаголов. Среди переходных глаголов способностью управления сказуемого наделены глаголы действительного залога. Если сказуемое, будучи минимальной единицей синтаксиса, состоит из более чем одного компонента, то оно, в свою очередь, приобретает различные когерентные возможности, которые и исследованы в этой главе.

Глава 4. Способность управления обращения. В двух подглавах этой главы рассмотрены способности управления действительных и каузальных глаголов обращения, что типично для личных форм глаголов, которые в речи связываются с обращением с помощью согласования грамматической категории числа.

Глава 5. Способность управления дополнения переходных глаголов. Эта глава состоит из пяти подглав. В двух первых подглавах исследована специфика способности управления дополнения одновалентных, двухвалентных, трехвалентных, а также действительных и каузальных глаголов. В третьей подглаве представлена способность когерентности глаголов-сказуемых действительного залога с разными классами имен-дополнений, что непосредственно соотносится с валентностью глагола. В четвертой подглаве выделены факторы, которые могут вызвать трансформацию валентности в результате словосложения, аффиксации, грамматических особенностей определения. Последняя подглава посвящена изучению валентности сложных аффиксальных глаголов и глаголов с корневыми морфемами по их внутриграмматическому выражению.

Глава 6. Способность управления обстоятельства переходных глаголов. Одним из средств выражения валентности является способность управления обстоятельства. С точки зрения логики нашего исследования важны те обстоятельства-дополнения, которые обозначают грамматическое значение обстоятельства места и связаны с сильным и обязательным управлением. Они могут быть выражены падежными формами существительных, обозначающих место, или союзными сочетаниями. В армянском языке с некоторыми глаголами действительного залога с помощью обязательного управления связываются не только обстоятельства места, но также обстоятельства причины и цели.

В Заключении представлены результаты исследования валентности переходных глаголов современного восточноармянского языка.

SILVA ALBERT MURADYAN
THE VALENCY OF TRANSITIVE VERBS
IN MODERN EASTERN ARMENIAN

Thesis for PhD degree in Philology, specialty 10.02.01 - "Armenian Language".

The defense of the thesis will be held on 27 September, 2021, at 15.00,
at the session of Specialized Council on Linguistics of 019 HAC in the
Institute of Language after H. Acharyan NAS RA
(address: Yerevan, 0015, Grigor Lusavorich St. 15)

SUMMARY

The aim of the dissertation is to investigate the linking ability of Eastern Armenian transitive verbs based on the interconnectedness of three levels of language: lexical, grammatical and syntactic.

The actuality of the dissertation. In Armenian, the verb, being the main speech-forming unit, stands out with various manifestations of connectivity. The actuality of this research lies in the insufficient investigation of the valency of Modern Eastern Armenian transitive verbs. The paper emphasizes the awareness of possible types of verb complementation which is significant and useful in the studies of languages since it enables a learner to produce a well articulated speech with grammatical clauses fully conveying the intended meaning.

The scientific novelty and practical value of the dissertation. The dissertation is devoted to the main characteristics of verb valency from a new, unexplored perspective. Based on the studies conducted in Armenian linguistics and taking into account the diversity of verb connectivity, we focus on the verb valency both from the syntactic and semantic perspectives not having been studied yet.

The theoretical and practical conclusions, drawn in the dissertation, can be used to create a verb valency dictionary, the information of which must meet the requirements related to the verbal connectivity as well. Additionally, the dissertation results can be used in theoretical and practical grammar courses in the learning process, as well as in the development of manuals, guidelines and textbooks.

The structure of the dissertation. The dissertation consists of an introduction, six chapters with the corresponding subchapters, conclusion, list of summaries, and references. The dissertation comprises 132 pages.

Introduction. In the introduction we have touched upon the history of the topic of investigation and studied various standpoints on valency in Armenian and foreign linguistics. The thesis is based on the thorough analysis of the publications of the given field.

Chapter 1. General description of Armenian verb valency. Valency is typical for all major parts of speech (verb, noun, adjective, and preposition). However, it is the verb that shows the most diverse and interesting valency patterns. In modern linguistics, verb valency can be defined as the general and specific linking ability of the verb, which can have dependency relations, often reciprocal, with other linguistic elements such as a subject, a vocative, a predicative, an object, and an adverbial.

This definition of the valency, however, cannot be typical to all languages. The verb valency, determined with its grammatical characteristics in different languages, can vary greatly.

In Armenian, the verb is characterized with all expressions of valency, but the transitive and intransitive verbs of Modern Eastern Armenian have different forms of connectivity due to the semantics of the verb. Unlike the verbs of neutral voice, the verbs in active and passive voice require a subject and an object and are therefore divalent. All transitive verbs are at least monovalent due to the verbal grammatical category of voice, that is to say, they necessarily require a direct object. Research shows that none of the Armenian verbs can be linked to all valency units at the same time.

Chapter 2. Subject-adjunction of transitive verbs. This chapter touches upon the main peculiarities of both active and causative verbs that can be connected with a subject depending on the category of voice and their semantics. Transitive verbs have various relationship possibilities with nouns as subjects that indicate persons, animals, and inanimate objects as well as with multiclass nouns.

Chapter 3. Predicate-adjunction of transitive verbs. Only active verbs can be connected with a predicate. The predicate, being the smallest syntactic unit and consisting of more than one member, can have different linking possibilities which have been analyzed in this chapter.

Chapter 4. Vocative-adjunction of transitive verbs. Two subchapters of this chapter are dedicated to the vocative-adjunction of the active and causative verbs, which is typical of those verbs, which are connected to the vocative by the grammatical category of number.

Chapter 5. Object-adjunction of transitive verbs. This chapter consists of five subchapters. In the first two subchapters three types of transitive verbs (monovalent, divalent, trivalent verbs) have been investigated according to the number of objects that a verb can govern. The third subchapter is devoted to the relationship possibilities of transitive verb-predicate with noun-objects of various class groups which is closely related to the verb valency. In the fourth subchapter we have singled out identified the factors that can cause valency changes in terms of word compounding, derivation and grammatical features of the supplement. The last subchapter is devoted to the investigation of valency of compound verbs, derivative verbs, verbs derived from root morphemes according to their intragrammatical qualities.

Chapter 6. Adverbial-adjunction of transitive verbs. One of the characteristic features of valency is the ability to govern the adverbial. The connection between the verb and adverbial is realized especially with the verbs of movement, which require an adverbial of place. A number of these verbs are multivalent as they may require different complements at the same time: adverbials of starting point, original, transition, endpoint. In modern Armenian, some transitive verbs also require adverbials of reason and purpose according to valency. Grammatical behavior of these obligatory adverbials is determined to a great extent by the lexico-grammatical properties of the verb that govern them.

Conclusion sums up the main outcomes (17 points) of the valency of transitive verbs in Modern Eastern Armenian.

